ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015թ. թիվ 390-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի
ԹԻՎ 243-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանում տեղի ունեցած կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. նոյեմբերի 19-ի «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ներմարզային երթուղիների ընտրության մրցութային հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 352-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 243-Ա որոշման հավելվածում «Ն.Խաչատրյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ» բառերը փոխարինել «Վ.Դանիելյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 18
ք.Վանաձոր